*Լարիսա ԵԳԱՆՅԱՆ*

# *ԱԽՈՒՐՅԱՆԻ ԿԻՐՃԻ ՋՐԱՁՈՐ - ԱՆԻ ՀԱՏՎԱԾԻ ՔԱՐԱՆՁԱՎՆԵՐՆ ՈՒ ՔԱՐԱՆՁԱՎԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ*

Քարանձավները մարդու համար բնակարան են ծառայել դեռևս նախնադարում: Լեռնային գետերի կիրճերն ավելի քան հարմար էին բնակության համար, և բազալտի ու տուֆի շերտերի մեջ բացված բնական քարանձավները լավագույն պատըսպարան էին: Բնական պաշտպանվածությունը, շատ դեպքերում նաև դժվարամատչելի լինելը, ինչպես նաև ջրի մերձակայությունը նպաստավոր պայմաններ էին մարդու բնակության համար: Պատմական զարգացման ընթացքում մարդը ոչ միայն իր կարիքներին հարմարեցրեց բնական քարանձավները, այլ նաև ստեղծեց վիմափոր, բնակելի նոր համալիրներ՝ անհրաժեշտ բոլոր կառույցներով՝ տուն, եկեղեցի, գերեզմանոց: Բնական փոքր քարանձավների մի մասն իր նախնական կիրառական նշանակությունը պահպանեց նաև հետագա դարերում՝ անհրաժեշտության դեպքում ծառայելով և՝ որպես կացարան, և՝ որպես ապաստարան:

Ախուրյան գետը Բանդիվան-Ամասիա-Ջրաձոր-Արեգնադեմ-Մարմաշեն, ավելի հարավ՝ Տայլար-Հոռոմոսի վանք-Անի հատվածներում անցնում է անդնդախոր կիրճով, որի խորությունը տեղ-տեղ հասնում է 30 մետրի: Կիրճի երկրաբանական կազմը բազալտ է և հրաբխային տուֆ:[1] Բազալտը հաստ և ամուր շերտով ներքևում է, մոտա-

---

[1] *Տարածքն ընկած է Արագածի գեոմորֆոլոգիական շրջանի յոթ ենթաշրջաններից մեկի՝ հարավային և հարավարևմտյան տարածքում: Երկրաբանների կարծիքով այդ հատվածի ժամանակակից մակերևույթը ձևավորվել է Կայնոզոյան դարաշրջանի տարբեր ժամանակահատվածներում: Պլիոցենի դարաշրջանում՝ մեզանից 14 մլն տարի առաջ Ախուրյան գետի ստորին հոսանքում երկրակեղևի բեկորների տեկտոնական շարժումների հետևանքով ձևավորվում է Ախուրյանի միջլեռնային գոգավորությունը: Գոգավորությունն անջատող լեռները միջին բարձրության են եղել: Պլիոցեն-Չորրորդականում (2 միլիոն տարի առաջ) դիտվում է ինտենսիվ հրաբխականություն և ձևավորվում է օբսիդիանով ուղեկցվող տուֆի շերտը: Ժամանակի ընթացքում Ախուրյան գետի հովտի ստորին հատվածում ուղղորդ քարաբեկորները պոկվել են ու ցած*

վորապես Ախուրյանի ջրի մակարդակին: Սրա վրա նստած է երկու հաստ շերտ՝ դեղին, փափուկ հրաբխային տուֆ և սև բազալտ: Երեք շերտերն իրարից բաժանված են հարթակներով և յուրաքանչյուր վերին շերտ հետ է ընկած՝ ներքևինի եզրից ակնհայտ հեռավորությամբ:

Միջին տուֆի պլաստն ունի հստակ տարբերվող երեք որակի և քանակի շերտեր. վերինը համեմատաբար բարակ, միջինը՝ ամենահաստը, փափուկ, սեամոխրագույն և տակինը՝ կարծր և սև: Երեք շերտերն էլ ճեղքվում են հորիզոնական և ուղղահայաց հարթություններով՝ ստեղծելով կարծես հղկված մակերևույթ: Ախուրյանի կիրճում քարանձավները և բազալտի, և տուֆի շերտերում են: Կան և՛ բնական, և՛ արհեստական քարանձավներ: Առաջինները հիմնականում տուֆի շերտի տակ են՝ ավազաքարային նստվածքներում: Այս շերտը շատ դյուրին է փորել, ուստի և բնական քարանձավները շատ հաճախ են ընդարձակվել: Իսկ բազալտի շերտերի բնական բացվածքները հիմնականում օգտագործվել են՝ պահպանելով իրենց նախնական տեսքն ու չափերը:

Ախուրյանի կիրճում քարանձավային համալիրներ ու քարայր-կացարաններ կան Բանդիվան-Ամասիա-Ջրաձոր-Արեգնադեմ-Մարմաշեն, ապա՝ Հայկաձոր-Անիավան-Խարկով, այնուհետև Անի-Մաղասաբերդ-Բագարան-Մրեն հատվածներում: Այդ քարանձավային բնակավայրերից ուսումնասիրված են Անին,[2] նրա հյուսիսային արվարձան Հայկաձորը[3] և Երերույքը:[4] Հնագիտական հետախուզություն է կատարվել Մարմաշենում[5] և Ջրաձորում:[6] Անիից հարավ՝ Ախուրյանի ստորին հոսանքում են Բագարանի և Մրենի քարանձավները, որոնց մասին Թորամանյանը գրում է. «Ուսումնասիրության ահագին նյութ կմատակարարե Բագարանեն դեպի Մրեն գնալու ճանապարհին վրա անմատչելի քարաժայռերու վրա և ծերպերու նման փորված քարայրերը ... ցածեն հայտնի է միայն նույն քարայրին բերանը, և ձեռագործ փորված ճանապարհը ուղղահայաց կերպով կտրված ահավոր քարաժայռի կուրծքին վրա...»:[7] Ախուրյան գետի արևմտյան ափին, Անի մայրաքաղաքից 4կմ հարավ գտնվում է Մաղասաբերդը, վերջինիցս մոտավորապես նույն հեռավորության վրա էր Բագարանը:

Ախուրյանի վերին հոսանքում քարանձավներ կան Բանդիվան-Ամասիա-Ջրաձոր-Արեգնադեմ հատվածում: Բանդիվանի քարանձավները գյուղից արևմուտք, Ախուրյանի աջ ափին և ձորի մեջ են: Ջրաձոր գյուղից ներքև՝ Ախուրյան գետի ձախ ափին՝ կիրճում Հ.Պետրոսյանի կողմից ուսումնասիրվել է հինգ քարանձավ: Մուտքերը պատերով շարված երկու քարանձավներից ծածկված մուտքով քարանձավում, ուր մարդու միջամտության հետք չի նկատվել, բացված 2x3մ մակերեսով պեղամասից

---

*թափվել՝ կուտակվելով ստորոտում: Տեկտոնական խոշոր ճեղքերից ժայթքել է լավան, որը Մեռտիսի (մեկ միլիոն տարի առաջ) ժամանակ ունեցել է անդեզիտային կազմ և ուղեկցվել է բեկորատված այլ նյութերով: Բազալտի շերտը ծածկվել է տուֆով՝ այսինքն տուֆբրեկչաներով և տուֆոկոնգլոմերատներով: Կարճատև դադարից հետո տեղի է ունենում տեկտոնական նոր բարձրացում: Մեռտիս Պոնտոսյան դարաշրջանում (մեկ միլիոն տարի առաջ) նորից սկսվում է հրաբխականություն, որն ուղեկցվում է տուֆերի կուտակմամբ (Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրություն, Եր., 1971, էջ 359):*

[2] *Д. Кипшидзе, Пещеры Ани, Ер., 1972.*

[3] *Հայկաձորի պեղումները սկսվել են 2003թ. և պարբերաբար շարունակվում են մինչ օրս (ղեկ. Հ. Խաչատրյան, Լ. Եգանյան):*

[4] *Ф. Тер-Мартиросов, Малоизученный памятник Ереруйка, Հայոց սրբերը և սրբավայրերը, Եր., 2001, էջ 236-237:*

[5] *Հնագիտական հետախուզությունն իրականացվել է Մարմաշենի արշավախմբի կողմից (ղեկ. Ս. Հարությունյան): Նյութերը հրատարակված չեն, պահվում են Շիրակի երկրագիտական թանգարանում:*

[6] *Հ. Հակոբյան, Ռ. Վարդանյան, Վ. Ջինջիրյան, Ախուրյան գետի վերին հոսանքում կատարված հնագիտական պեղումների նախնական արդյունքները (Ջրաձոր և Հողմիկ գյուղերի տարածք), Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում, (1986-1987թթ. պեղումների արդյունքները), Եր., 1992, էջ 107:*

[7] *Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության (աշխատությունների երկրորդ ժաղովածու), Եր., 1948, էջ 195:*

գտնվել են վարգացած միջնադարին պատկանող կճուճների, բասերի, անոթների կափարիչների բեկորներ:[8]

Կամխուտ (նախկին՝ Չախմախ) գյուղը գտնվում է Ամասիայից 7կմ հարավ-արևմուտք՝ Ախուրյանի վերին հոսանքի Ամասիա-Ջրաձոր հատվածում, կիրճից ոչ հեռու: Այստեղ ափամերձ տուֆի շերտերում ևս կա քարանձավային բնակավայր: Գյուղի արևելյան մասում տուֆի հաստ շերտը դեպի հյուսիս ձգվում է մինչև փոքրիկ ձորակը, արևելքում ավարտվում է անցյալ դարի 50-ական թվականներին շահագործված և լքված հանքի թափոնների կուտակումներով, արևմուտքում՝ շերտը մասամբ մնացել է տների տակ, իսկ տնամերձերի ու արտերի հողի մակերեսն հագեցած է անտիկ և միջնադարյան խեցեղենի բեկորներով: Հյուսիսում և արևելքում լքված հանքի շերտը բաց է, և երևում են քարանձավային բնակավայրից պահպանված կացարաններ:Շատ հաճախ կացարանների երեք պատերը փորված են քարի շերտի մեջ, իսկ չորրորդը՝ քարաշար է: Ծածկի նույն սկզբունքն է կիրառվել նաև այստեղ: Բնակարանը կառուցվել է՝ օգտագործելով ժայռի մեջ փորված երեք պատերը, որոնց վերին հատվածում պահպանվել են ծածկի գերանների համար արված փորվածքները: Քարանձավներից մի քանիսը լցված են և փակված, միայն մուտքեր են երևում: Փոքր ձորակից հյուսիս՝ մյուս ափին, մերկացած ժայռեղեն մակերեսի վրա ընդգծվում են շրջանաձև փորվածքներ, որոնք կարող էին ծառայել քարեղեն կացարանների լուսավորության համար կամ, անհրաժեշտության դեպքում՝ որպես պահեստային ելք: Քարանձավներից մեկի պատից անջատված ժայռաբեկորի երկու կողմերին պահպանված են ուղղանկյուն և շրջանաձև փորվածքներ, որ նույն նպատակին են ծառայել:[9]Վերգետնյա նյութերի մեջ հիմնականը անտիկ և միջնադարյան խեցեղենի ու ծածկի կղմինդրների բեկորներն են:

Ախուրյանի կիրճի բարձրադիր հատվածում նույնպես բազալտի շերտի մեջ փորված և բավականին անմատչելի, ուղղանկյուն, քիչ կլորացված անկյուններով, կրունկների մեջ պտտվող քարե դռներով փոքր քարանձավներ կան Գյուլլիբուլաղ (ներկայիս՝ Արեգնադեմ) գյուղի մերձակայքում: Անցյալ դարի 90-ական թվականներին տարածքը քարհանքի վերածվելուց հետո քարանձավներից մի քանիսի մուտքերը փակվել են արտադրական թափոններով: Ախուրյանի ձախ ափին՝ Մարմաշենի վանքի դիմաց, բազալտի շերտի մեջ, կիրճի բարձրադիր հատվածում գտնվող մի քարանձավ հետախուզվել է 1972թ: Գտածոները 10-12-րդ դարերի խեցեղենի բեկորներ են:

Ախուրյանը Մարմաշենից հարավ մինչև Անիի նախադուռը՝ Հայկաձոր հոսում է հարթավայրով: 2000թ. Հայկաձոր գյուղի վարչական տարածքում, Հոռոմոսի վանքի դիմացն ընկած հրվանդանի հնագիտական հետախուզության արդյունքում դեպի գետն իջնող դարավանդի միջին հատվածում՝ տուֆի շերտի մեջ հայտնաբերվեց քարանձավային բնակավայր՝ իրար հետ հաղորդակցվող, ձեռակերտ և բնական բազմաթիվ քարանձավներով:[10] Այստեղ՝ Ախուրյանի զառիթափ ափամերձ հատվածում, դեղնավուն տուֆի շերտի մեջ պահպանվել են մի գծով, իրար կողք-կողքի փորված քարանձավներ, որոնք հասնում են մինչև հրվանդանի ծայրը: Հրվանդանի վերին հատվածն ազատ է փորվածքներից, թեքությամբ մոտ 4-5մ ցած է իջնում: Այստեղ վերին և ստորին բազալտային շերտերում քարանձավներ չկան: Վերին հարթակից թեքությամբ իջնող երկրորդ՝ տուֆի շերտի մեջ քարանձավներն են, որոնք կիրճի մակարդակից նույն բարձրության վրա են՝ 15-20մ, սակայն հավանաբար ներքին հարթակները նախապես ջրի մակարդակին են եղել:

Հայկաձորի քարանձավային նորահայտ բնակավայրը գտնվում է Անիից 3կմ հյուսիս՝ մայրաքաղաքի և նրա հյուսիսային դարպասի՝ Հաղթակամարի միջև, ուղիղ Հոռոմոսի վանքի դիմաց, Ախուրյանի աջ ափին:[11]Այն, որ հայտնաբերվածը Անիի ար-

---

*[8] Հ. Հակոբյան, Ռ. Վարդանյան, Վ. Ջինջիրյան, նշվ. աշխ., էջ 107:*

*[9] Ըստ գյուղացիների, քարանձավային այս բնակավայրի վերջին բնակիչները եղել են եղեռնից մազապուրծ, քսաներկու անձից բաղկացած մի ընտանիք:*

*[10] Հ. Խաչատրյան, Լ. Եգանյան, Անիի նորահայտ արվարձանի 2003թ. պեղումները, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», VI, Գյումրի, 2003, էջ 134:*

*[11] Անիի նորահայտ արվարձանի պեղումները սկսվեցին 2003թ. և շարունակվում են ցայսօր: Աշխատանքներն իրականացնում է Շիրակի երկրագիտական թանգարանի և ԳԱԱ Շիրակի*

վարձանն է, անվիճելի է: Նիկողայոս Մառը, որ քաջատեղյակ էր Անիի տեղադրությանը, նրա հյուսիսային արվարձանի մասին գրում է. «քաղաքամերձ մասը հասնում էր մինչև երկու, հեռվից զանգակատների նմանվող սյուները, Անիի միջնաբերդից չորս վերստ հեռավորությամբ»:[12] Նույն կարծիքին է նաև Թ. Թորամանյանը, և ըստ նրա, Անիի արվարձանները հասնում էին մինչև Հոռոմոսի վանք,- «Անպայման Հոռոմոսի վանքը, Բագնայր, Ալաջա և նրանց նման 4-10կմ հեռավորության վրա այժմ ավերակ գյուղերը Անիի արվարձաններն էին և անմիջական կապ ունեին քաղաքի ներքին վարչական ու տնտեսական գործերի մեջ...այժմյան մեր տեսած պարիսպներից դուրս էր բուն Անի քաղաքը, և պարիսպը քաղաքի ամրոցն էր:[13] Լեոն ևս կիսում է այս տեսակետը,- «...մի քաղաքի սահմանները նրա տները չեն որոշում, մանավանդ մի այնպիսի քաղաքի, որի բնակիչների մի մասը հողագործությամբ և անասնապահությամբ էր պարապում»:[14] Անիի արվարձանները հասնում էին մինչև Հոռոմոսի վանք, իսկ Հաղբակամարը կառուցված էր քաղաքի և վանքի սահմանագծին և «.... այն հավանորեն ծառայել է նաև որպես քաղաքի սահմանում գտնվող դիտակետ»:[15]

Բագրատունիների ժամանակ հիմնված Հոռոմոսի վանքն Անի մայրաքաղաքի հեռավոր դարպասների նշանակություն էր ստացել: Այստեղով էին անցնում Անին Հայաստանի մյուս շրջանների հետ կապող տարբեր ճանապարհները, իսկ դրանցից գլխավորն անցնում էր Ախուրյանի վրա ձգված քարե կամուրջով, որի մասին Ալիշանը գրում է., «...ի հնումն, այլ և ի յետին դարս ապաւենք էին կարաւանաց՝ ի Պարսս երթևեկաց, և առ վանիւքն անցանէին ընդ կամուրջ քարաշէն՝ այժմ կործանեալ....»:[16] Կամուրջի հենասյուների հիմքերը գտնվեցին Ախուրյանի ափին, Հայկաձորի քարանձավային բնակավայրի 2004թ. պեղումների ժամանակ:

Նորահայտ արվարձանի քարանձավները ևս մեկ կամ երկու հարկանի են: Միահարկ քարանձավները փորված են տուֆի շերտի մեջ: Երկհարկ քարանձավների առաջին հարկերը տուֆի տակ գտնվող ավազաքարային շերտում են, իսկ երկրորդ հարկերը՝ դյուրին մշակվող, չհասունացած տուֆի մեջ: Բացառություն է ստորին՝ բազալտային շերտի մեջ փորված, գլանաձև անցքով հաղորդակցվող երկու հարկերով քարանձավը նորահայտ բնակավայրից քիչ հյուսիս՝ Հայկաձորի մեկ այլ՝ «Տերտերի բոստան» տեղանքում:

Ուժեղ հողմահարման պատճառով տուֆի շերտի մեջ փորված քարանձավները ենթարկվել են խիստ քայքայման և ավերման: Մուտքերի նախական ձևը չի պահպանվել: Փուխր ապարը ոչ միայն քայքայվածության, այլ նաև փլվածքների հետևանքով փոխել է քարանձավների նախնական տեսքը, և շատ հաճախ մուտքերը փակված են հսկա ժայռաբեկորներով: Եվ այսօր մուտքերը հազվադեպ են մարդու հասակից բարձր և շատ դեպքերում հարթակների մշակութային շերտի բարձրացման հետևանքով փակված են: Փլուզումներին նպաստել են ուժեղ երկրաշարժները, որոնցից մեկը 14-րդ դարի սկզբին (1319) համարվում է Անիի բազմաթիվ հրաշալի կառույցների, նաև Մայր տաճարի գմբեթի փլուզման պատճառ:

Ինչպես ցույց են տալիս Հայկաձորի պեղումները, յուրաքանչյուր փլուզումից և ավերումից հետո քարանձավային բնակավայրը վերակառուցվել ու վերաշինվել է: Քարանձավները հիմնականում ուղղանկյուն հատակագիծ ունեն, պատերն ու առաստաղը հարթ են, անկյուններն՝ ուղիղ: Կան նաև սենյակներ, որոնք կլորավուն՝ կիսասֆերիկ փորվածք ունեն: Պատերի և առաստաղի վրա հստակ է հատող կամ փորող գործիքի շեղբի լայնությունն ու ակոսի խորությունը: Տաշվածքը մեծ մասամբ արված է 30 աս-

---

*հայագիտական հետազոտությունների կենտրոնի միացյալ արշավախումբը (Լ.Եգանյան,Հ. Խաչատրյան):*

[12] *Н. Марр. Ани столица древней Армении (историко-археологический набросок). „ Братская помощь пострадавшим в Турции армянам„ М., 1998, стр. 221.*

[13] *Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության. աշխատությունների ժողովածու, Եր., 1942, էջ 299, 328:*

[14] *Լեո, Անի, Եր., 1946, էջ 132-133:*

[15] *Կ. Մաթևոսյան, Հոռոմոս-Անի ճանապարհին գտնվող կամարը , Պատմա-բանասիրական հանդես, 1, 1982, էջ 144:*

[16] *Ալիշան, Շիրակ, Տեղագրութիւն պատկերացոյց, Վենետիկ, Ս. Ղազար, 1881, էջ 20:*

տիճան թեքության կանոնավոր թեք գծերով: Կան կից սենյակներ, որոնք երբեմն իրարից բաժանված են սյուներով և կամարներով՝ ստեղծելով գմբեթասրահի տպավորություն: Նորահայտ արվարձանում նախնական տեսքը պահպանված մուտքերը կամարաձև բացվածք ունեն՝ կողերին դռների կրունկներով, հատակին՝ քարից շեմով: Լույսը քարանձավ է թափանցել պատերի վրա բացված, Հոոոմոսին նայող պատուհաններից, որոնք բարձր են, դրսից՝ նեղ, ներսից՝ աստիճանաբար լայնացող: Պատուհանների ծավալային և դիրքային այսօրինակ լուծումն ապահովել է դրսից բավականին բարձր տեղադրություն և անմատչելի դիրք, իսկ ներսում՝ բավարար լուսավորություն: Պատուհանները ծառայել են նաև ծխահեռացման համար: Քարանձավների պատերին փորված են մեծ ու փոքր խորշեր, որոնք տարբեր բարձրությունների վրա են, կլորավուն են կամ տաշտաձև: Հատակին տնտեսական նպատակների համար արված ուղղանկյուն և գլանաձև փոսեր են փորված, նաև թոնիրներ են թաղված: Ամեն քարտուն ունեցել է նաև օջախ, երբեմն նույնիսկ մի քանիսը:[17] Արվարձանում կան ինչպես տուֆի շերտի մեջ փորված կլորավուն և ուղղանկյուն փոս-օջախներ, այնպես էլ հատակի վրա քարերով շարվածներ: Մի քանի օջախի և երկու կամ ավելի թոնիրների առկայությունը մեկ տան մեջ և դիմացի հարթակներին, ենթադրում է ընտանիքի մեծության մասին, իսկ չափերի տարբերությունը՝ փոքր թոնիրների և օջախների ամենօրյա օգտագործում: Քարանձավներում կան նաև ժայռի մեջ փորված բուխարիներ, իսկ դիմացի հարթակներում դրանք քարով են շարված:

Բնակելի են եղել և՛ առաջին, և՛ երկրորդ հարկերը՝ թոնիրներով, հատակի մեջ փորված փոքր ամբարներով և օջախներով: Երկհարկ քարանձավների հարկերն իրար հետ հաղորդակցվել են երկրորդ հարկի հատակին՝ հենց մուտքի առջև, փորված գլանաձև անցքերով, որ բացվել են առաջին հարկի առաստաղին:

Այսպես, հյուսիսային արվարձանի երկհարկ քարանձավներից մեկի առաջին և երկրորդ հարկերն իրար հողորդակցող գլանաձև անցքն արված է երկրորդ հարկում՝ անմիջապես մուտքից ներս: 90սմ տրամագծով գլանն իջնում է 1մ ուղիղ, ապա թեքվելով սահում է դեպի առաջին հարկ: Առաջին հարկի քարանձավը դյուրությամբ մշակվող ավազաքարային շերտի մեջ ընդարձակ բնական բացվածք է: Գլանի հատակը բացվում է առաջին հարկի քարանձավի առաստաղին: Ինչ նպատակով է հաղորդակից անցքը փորվել շեմի մոտ: Եթե անցքն արվեր առաջին հարկից տաքության՝ վեր բարձրանալու նպատակով, բնականաբար երկրորդ հարկում չէին տեղադրի ևս երկու թոնիր: Հնարավոր է անցքն առաջին հերթին արվել է պաշտպանական նպատակով: Թշնամու հարձակման ժամանակ բնակիչները շատ արագ կարող էին իջնել առաջին հարկ և այստեղից իրար հաղորդակից քարանձավներով հեռանալ: Կարևոր է նաև մեկ այլ հանգամանք. թշնամին մինչև կկոտրեր կամ կբացեր քարե դուռը (քարե դռների մասին են վկայում մուտքի մոտ պահպանված կրունկները) և կփորձեր ներխուժել քարանձավ, ապա առաջին իսկ քայլից կհայտնվեր հենց շեմի մոտ փորված փոսում: Անիի քարանձավների մասին Թ. Թորամանյանը գրում է. «...երբ ի նկատի ունենաք, որ թշնամիներու հարձակման ժամանակ քարայրերը ամենեն ապահով ապաստարաններն էին, այն ատեն պիտի համոզվենք, որ աղքատներեն զատ, հարուստներն ալ իրենց կյանքն ու գույքը պաշտպանելու համար քարափոր բնակարաններ ունենալու ձգտումը պիտի ունենային»:[18] Արվարձանի մինչ այժմ պեղված մի քանի այլ քարանձավներում պահպանվել են առաջին հարկի առաստաղներին արված նման բացվածքներ, սակայն երկրորդ հարկերն անավարտ են: Արվարձանի թիվ 4 քարանձավի առաստաղին արված փորվածքը բացվում է երկրորդ հարկի փոքր և նեղ միջանցքի հատակին՝ զբաղեցնելով ողջ մակերեսը: Առաստաղը ցածր է (բարձրությունը՝ 1,5մ), հետին պատը, կորությամբ իջնելով, միանում է հատակին: Հյուսիսային պատի վրա՝ հատակից 1մ բարձրության վրա, փոքր խորշ է, որ սովորաբար արվում էր ճրագ դնելու համար: Հաղորդակից անցքի տակ՝ առաջին հարկի քարանձավի հատակի մեջ, բացվեց թոնիր, որի վրա ավելի ուշ դրվել է օջախ: Պետք է ենթադրել, որ առաստաղին արված բացվածքը ծխատար է

---

[17] *Դ. Կ ի ռ ա ի դ ա զ ե, նշվ. աշխ., էջ 77:*

[18] *Թ. Թ ո ր ա մ ա ն յ ա ն, Նյութեր հայ ճարտարապետության պատմության (աշխատությունների ժողովածու), Եր., 1942, էջ 327:*

առաջին հարկի համար: Կարծում ենք՝ նախատեսված է եղել փորել երկրորդ հարկ, սակայն գործն անավարտ է մնացել: Նախ, երկրորդ հարկում մուտքը նույն ձևն ու չափերն ունի, ինչ մյուս քարանձավներում է: Բացի այդ, միայն ծուխը հեռացնելու համար անհրաժեշտություն չկար նման ծավալի աշխատանք կատարել կամ պատին խորշ փորել: Քարանձավը լինելու էր երկհարկ, և հարկերը հաղորդակցվելու էին գլանաձև բացվածքով: Իսկ բացվածքը հատակի ողջ մակերեսով անելն անշուշտ պիտի խանգարեր, քանի որ աշխատելու և քարանձավն ընդարձակելու համար ոտքերի տակ հենման մակերես չի մնում: Ուրեմն, երբ երկրորդ հարկը մնացել է անավարտ, բացել են հաղորդակից անցքը (բացառված չէ նաև, որ այն կարող էր նախապես փոքր արվել, հետո ընդարձակվել), որն արդեն ծառայել է միայն որպես ծխատար: Մեկ այլ քարանձավում (թիվ 2) նման բացվածքն արվել է առաջին հարկի քարանձավի (տուֆի շերտի մեջ է) առաստաղին և չի ավարտվել: Այս փորվածքն արված է մոտ 1,30մ խորությամբ, և անցքի սկզբից (տրամ. 70սմ) դեպի շրջանի եզրերը աստիճանաբար լայնանալով, ստացվել է փոքր հարթակ (տրամ.1,30մ): Այսպես՝ լայնանալով պիտի փորվեր նաև երկրորդ հարկը: Այսպես են հաղորդակցվել նաև Հայկաձորի մեկ այլ՝ «Տերտերի բոստան» տեղանքի քարանձավները: Կիրճի ստորին՝ բազալտային պլաստի մեջ առաջին հարկի բնական քարանձավից երկրորդ՝ ձեռակերտ քարանձավ բարձրացել են նույնանման գլանաձև փորվածքով:

Անշուշտ այս փորվածքները օգտագործվել են նաև առաջին հարկից տաքության՝ վերև բարձրանալու համար, թեև թոնիրներ ու օջախներ կան նաև երկրորդ հարկերում : Դրանք, ըստ հայտնաբերված գտածոների, համաժամանակյա են և վերաբերում են IX-X դարերին: Քարանձավների բազմաթիվ վերակառուցումների ժամանակ թոնիրներն ու օջախների փոսերը բացվել և լցվել են, երբեմն՝ ամբողջությամբ: Փակվել են նաև անցուղիներն ու որոշ քարանձավներ: Այսպիսի մի քարանձավ բացվեց 2005թ.: Նախորդ տարիներին պեղված համալիրներից հյուսիս, մատուռի դիմացի հարթակը մաքրելիս, պարզվեց, որ վերջինս ավազաքարային շերտում ձեռակերտ մի քարանձավի վրա է նստած: Առաջին հարկի քարանձավի պեղումներով բացվեց շեղանկյուններով զարդարված առաստաղ, դռան կամարակապ բացվածք, հատակին շեմի քար և պատերին դռան կրունկների փոսեր ունեցող մի քարանձավ՝ վերաշինման և վերակառուցման տարաժամանակյա հետքերով: Քարանձավի մեջ տեղադրված թոնիրներից, օջախներից, հատակին տնտեսական նպատակներով տարբեր չափերի փոսերից բացի բացվեց նաև մեծ հոր և երկու ակով մի գլանաձև փորվածք: Քարանձավի պատերի ստորին հատվածներում փորված են փոքր խորշեր, որ գործիքներ կամ արտադրանքի փոքր ձևեր տեղավորելու համար կարող էին լինել: Որ այստեղ արհեստանոց է եղել, վկայում են պատերի տակ դրված հում կավի տարբեր չափերի զանգվածները: Իսկ տեղական արտադրության առկայության մասին են վկայում նաև պեղավայրում ապակու, մետաղի և խոտան խեցեղենի բազմաթիվ գտածոները:

Դարերի ընթացքում երկրաշարժերի բազմաթիվ ավերումները վերակառուցման անհրաժեշտություն են առաջացրել: Հսկա ժայռաբեկորներ են ընկել քարանձավների արևելյան պատը կազմող ժայռերից: Փլվածքները փակվել են նոր՝ այս դեպքում արդեն քարաշար պատով: Այսպես սկսել են կառուցապատել նաև քարանձավների դիմացի հարթակները: Փլուզումների ժամանակ ընկած ահռելի ժայռաբեկորները չկարողանալով հեռացնել, հաճախ դրանք ներառել են այս կամ այն կառույցի մեջ: Ժայռեղեն հարթակի վրա կառուցվել է լրացուցիչ բնակարան՝ գոմով և տնտեսական մասով՝ տուֆի շերտի մեջ փորված ամբարներով և նույն շերտի մեջ տեղադրված թոնիրներով: Քարանձավի արևելյան պատի ուղղահայաց կտրվածքի վրա պահպանված, միաշար փոքր անցքերի մեջ նստել են քարանձավից դուրս՝ դիմացի հարթակների վրա կառուցված կացարանների ծածկի գերանները: Քարանձավային բնակավայրում բացվեց նաև մի փոքր, ձեռակերտ մատուռ քարանձավ (տրամ. 2,5մ):[19]

Անի մայրաքաղաքի և նրա հյուսիսային արվարձանի միջև ընկած հատվածում Անի ավանն է (նախկին Անի-Պեմզա): Այստեղ, քարայր-կացարանային համալիր կա

---

[19] *Հ. Խաչատրյան, Լ. Եգանյան, Անիի նորահայտ արվարձանի 2003թ. պեղումները, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», VI, Գյումրի, 2003, էջ 138:*

ինչպես Ախուրյանի կիրճում, այնպես էլ Երերույքի տաճարի մոտ:[20] Տաճարից մի քանի տասնյակ մետր հեռու դեպի հյուսիս և հյուսիս-արևմուտք, տարածքը թեքությամբ կտրուկ իջնում է դեպի քարանձավների մուտքերը: Ձեռակերտ այս քարանձավների մի քանիսի մուտքերը փակված են փլված հսկա ժայռաբեկորներով: Հարթակի արևմտյան մասի կտրատված եզրերը ծածկված են հողի հաստ շերտով և, ելնելով տեղանքի ընդհանուր տեսքից, կարելի է ենթադրել, որ հավանաբար այս հատվածում ևս եղել են քարանձավներ: Երերույքում պահպանված քարանձավային համալիրները մի հարկանի են, կազմված են հաղորդակից երկու-երեք սենյակներից: Ուղղանկյուն սենյակների պատերի և առաստաղի անցումներն արված են անխնամ, հատակները փլվածքների հետևանքով բարձրացել են: Փլված են նաև սենյակները բաժանող միջնապատերը: Սենյակների երկարությամբ կան նեղ ելուստ-նստարաններ: Քարանձավները լուսավորվել են անկյունում լրացուցիչ խորշի ողջ մակերեսով փորված շրջանաձև բացվածքներից: Գլանաձև այս փորվածքները բացվում են արտաքին մակերեսին: Աստիճանաձև իջվածքով այս փորվածքներն անշուշտ եղել են լուսավորության համար, սակայն դատելով դիրքից և չափերից, անհրաժեշտության դեպքում կարող էին օգտագործվել նաև ելումուտի համար: Տեղանքի ժայռեղեն մակերեսը հարթ է, ուր բացվող անցքերը




հավանաբար անձրևի կամ ձյան ժամանակ կալվել են, ինչպես երդիկները: Տեղ-տեղ տեղանքի հարթ մակերեսին նկատելի են հողով լցված, 80-100սմ տրամագծով շրջանաձև բացվածքների եզրագծերը: Մակերեսին կան նաև ուղղանկյուն փորվածքներ, որոնք ավելի շատ սարկոֆագներ են հիշեցնում:[21]

---

[20] *Երերույքի չափագրությունն ըստ Ф. Тер-Мартиросов, նշվ. աշխ., էջ 236-237:*

[21] *Ժայռեղեն մակերեսին սարկոֆագներ հայտնի են Հայաստանի տարաժամանակյա տարբեր հնավայրերից: Տես Լ.Եգանյան, Շիրակի անտիկ թաղման ձևերը, ԳԱՍ ՇՀՀ կենտրոնի, «Գիտական աշխատություններ», III, Գյումրի, 2000, էջ 55: Ա. Քալանթարյան, Հ. Մելքոնյան, Հնագիտական աշխատանքները Հայաստանում 1990-2003թթ., Եր., 2005, էջ 49, նկ. 30.*

Երերույքից մինչև Անի մայրաքաղաք հասնելը ափամերձ տուֆի շերտի մեջ միջնադարյան (IX-XIV դդ.) բնակելի քարանձավներ կան նաև Խարկովում: Մի մեծ, ձեռակերտ քարանձավ մինչև վերջերս կար Խարկովից քիչ ներքև, ուղիղ Անի մայրաքաղաքի դիմաց:[22]

Ախուրյանի կիրճի միջին՝ տուֆի շերտում են Անիի բնակելի քարանձավները: Ախուրյանը Անի քաղաքը եզերում է հարավ-արևելյան կողմից, ուր քարանձավներ փորված են միայն աջ ափին՝ կիրճի կտրտված լանջերին:[23] Անին առանձնանում է բնական և արհեստական քարանձավների քանակով, դրանց զբաղեցրած տարածքով, կառույցների բազմաձևությամբ և ճարտարապետական յուրահատուկ լուծումներով: Քարանձավների մեծ մասին կարելի է մոտենալ կիրճից բարձրացող թեքդիր նեղ արահետներով: Երբ քարանձավները բնակելի էին, հավանաբար աստիճաններով և արահետներով են մոտեցել մուտքերին:

XX դարի սկզբին Անի քաղաքը համակողմանի ուսումնասիրվեց Ն. Մառի արշավախմբի կողմից: Առանձին ուսումնասիրության առարկա դարձավ նաև քարանձավային Անին:[24] Շերտը, որի մեջ փորված են քարանձավները «քար ըսելէ ավելի եփած հողի նման է՝ հրաբխային լավայի ջերմության մեջ ավազով և խճով ձուլված և թրծված: Ոչ ամառային արեգական կիզիչ ջերմությունը կարող էր թափանցել այդ քարափոր բնականներու մեջ և ոչ ձմեռվան ցուրտն ու խոնավությունը»,-գրում է Թ.Թորամանյանը:[25] Ուժեղ հողմնահարման և երկրաշարժերի հետևանքով Անիի քարանձավների մեծ մասը ավերվել է և թաղվել փլվածքների տակ: Հետազոտվել է միայն մի մասը՝ մոտ 500 կիսավեր, մարդկանց կողմից վաղուց լքված համալիրներ, սակայն քարանձավների հիմնական հետազոտող Կիպշիձեն համոզված էր, որ նման կացարաններ ժամանակին եղել են 1000-ից ոչ պակաս:[26] Ըստ Թ.Թորամանյանի «Հազարավոր քարանձավներ խտացած են Ծաղկոցաձորի, Գլիձորի և Ախուրյանի ձորերու մեջ»:[27] Վերին շերտի կարծրության պատճառով Անիի քարանձավները քիչ են (մոտ 30-40, մեծ մասը՝ Գայլաձորում), այն էլ շատ կոպիտ աշխատանք են. պատերը փորել են սրածայր երկաթյա գործիքով, ամուր տեղերում՝ երբեմն էլ՝ քլունգով:[28] Չնայած Անիի քարանձավները տարածված էին տարբեր տեղերում և երեք կողմերից շրջապատում էին Անին, հետազոտողները պայմանականորեն քաղաքի այս հատվածը կոչել են «Քարանձավային Անի», որը բաղկացած է մշտական բնակիչներ ունեցող թաղամասերից: Դա քարանձավային քաղաք էր՝ նման Ուպլիս-Ցիխեին և Վարձիային:[29]Քարանձավային Անիի «քարե տների» մեծ մասը կազմում են բնակելիները: Անիում մեզ հասած նման բնակելի տների թիվը 400 է:[30] Հյուսիսային արվարձանում դրանք ավելի քիչ են:[31]Անիում առավել հետաքրքիր են մեծ բնակելի համալիրները՝ սովորաբար բաղկացած 3-5 սենյակներից՝ իրարից բաժանված կամարաձև մուտքերով, պարզ սյուներով: Սակայն այսպիսի

---

[22] *21-րդ դարի սկզբին մերձակա քարեանքում իրականացված պայթեցումների հետևանքով քարանձավը փլվեց:*

[23] *Իսկ Ծաղկոցաձորում, որ քաղաքի բնական սահմանն է արևմտյան կողմում, Բագնայրում, որ արևմտյան կողմից թափվում է Ծաղկոցաձորի մեջ, Իգաձորում և Գայլաձորում, որոնք քաղաքի հյուսիս-արևմտյան և հյուսիս-արևելյան կողմից շրջապատում են քաղաքը, քարանձավները փորված են և՛ աջ, և՛ ձախ ափերին:*

[24] *Անիի քարանձավների ուսումնասիրությունը իրականացվեց 1911, 1912, 1915 և 1916 թթ. արշավախմբերով: 1915թ. արշավախմբի աշխատանքներից գլխավորը Անիի քարանձավային բնակավայրերի նկարագրությունն էր, որը հանձնարարվեց Դ. Կիպշիձեին: Իսկ հաջորդ 1916թ. աշխատանքներին միացել է նաև Ն. Տոկարսկին: Դ. Кипшидзе, նշվ. աշխ., էջ 8:*

[25] *Թ. Թ ո ր ա մ ա ն յ ա ն, Նյութեր հայ ճարտարապետության պատմության (Աշխատությունների ժողովածու), Եր., 1942, էջ 326:*

[26] *Դ. К и п ш и д з е, նշվ. աշխ., էջ 100:*

[27] *Թ. Թ ո ր ա մ ա ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 325:*

[28] *Դ. К и п ш и д з е, նշվ. աշխ., էջ16:*

[29] *Նույն տեղում, էջ 22:*

[30] *Չափագրությունն ըստ Դ. Кипшидзе, նշվ. աշխ. :*

[31] *Հայկաձորից քիչ հյուսիս, հաջորդ հրվանդանի վրա՝ Հաղբակամարի տակ ձգվող տուֆի շերտի մեջ, շարունակվում են այն քարանձավները, որոնք այսօր օտար տարածքում են:*

բնակարանները քիչ են՝ մեծ մասը մեկ «սենյակից» բաղկացած: Բացի կացարաններից, քարանձավային Անիում կային եկեղեցիներ (շուրջ 30), խանութներ, ջրաղացներ, ձիթհանքեր, դամբարաններ, այսինքն՝ այն մի ամբողջ քաղաք էր:[32]

Թեև «Քարանձավային Անին» մարդաշատ էր և ուներ քաղաքին բնորոշ բազմաթիվ գործառույթներ և նույնիսկ իր որոշ մասերով մտնում էր հենց քաղաքի մեջ, բայց հայ պատմիչները նրա մասին չեն թողել որևէ վկայություն: Միակ վկայությունը պահպանվել է վրացական Թամարա թագուհու ժամանակակից, անանուն ժամանակագրի մոտ՝ կապված 1209 կամ 1211թ. Անիի վրա Արդաբիլի էմիրի հարձակման հետ: Նկարագրելով եկեղեցում 12000 աղոթողների կոտորածը, ժամանակագիրն ավելացնում է. «... *որը փախչում էր պալատ, և ամրացավ այնտեղ, որը փախչեց քարանձավներ, որ կոչվում էին քարտուն և եթե նա փրկվեց, մտավ և մնաց կամ ամրոցում կամ քարտունում*:[33] Վրացի պատմիչի բերած տեղեկության մեջ հատկապես հետաքրքիր է *քարտունը* քարանձավի իմաստով:[34] Նկարագրությունից հետևում է, որ քարտունը քարանձավային թաղամաս էր, և մշտական բնակարան էր Անիի բնակչության մի մասի համար, թեև վրացի պատմիչի մոտ՝ ոչ մի տվյալ չկա դրանց բնույթի կամ նշանակության մասին: Փաստը, որ բնակիչները փախչում են քարանձավներ, դույզն իսկ չի հիմնավորում դրանց միայն թաքստոց լինելու ենթադրությունը: Այսպես կոչված՝ «վերգետնյա Անիի» բնակիչները կարող էին ժամանակավոր ապաստան գտնել «ստորգետնյա Անիի» բնակիչների մոտ:



Քարանձավային բնակավայրերի հպանցիկ հիշատակում կա 13-րդ դարի հեղինակ Հովհաննես վանականի մոտ: Ըստ նշված աղբյուրի վկայության՝ մոնղոլները արշավանքի ժամանակ «1236թ. Կայան կոչվող անառիկ ամրոցը և Լոռի քաղաքը և հայկական մայրաքաղաք Անին և մյուս ամրոցներն ու քարանձավները, նույն տարում գրավեցին»:[35] Ամրոցներն ու քարանձավները նույն շարքում դնելն ենթադրում է վերջիններիս նաև պաշտպանական դեր ունենալը:

---

[32] *Դ. Կիպշիդզե, նշվ. աշխ., էջ17:*

[33] *Նույն տեղում, էջ 23:*

[34] *Տե՛ս Դ. Կիպշիդզե, Пещеры Ани գրքի վերջում Ն. Տոկարսկու ծանոթագրությունը. «Քարտուն» չի հանդիպում հայերեն գրավոր և բանավոր խոսքում, սակայն ըստ ամենայնի 13-րդ դարում գործածական է եղել և պահպանվել է վրացերենում:*

[35] *Т. Акопян, Ани столица средневековой Армении, Ер., 1985, стр.76.*

Անիի քարանձավների բնակեցման վերաբերյալ կան տարբեր կարծիքներ: Մշտապես, ընդհուպ մինչև 20-րդ դարի սկիզբն օգտագործման մեջ եղած քարանձավների ժամանակագրական ստույգ սահմանը տալն անհնար է: Երբ քարանձավային կացարանները քիչ էին ուսումնասիրված, կարծիք կար, որ դրանք պատկանել են քաղաքի ոչ ունևոր բնակչությանը, քանի որ նման բնակարանները շատ էժան էին և այստեղ կարելի էր ապրել առանց վառելիքի: Ըստ Կիպշիձեի, աղքատ բնակչությունն այստեղ ապրել է մշտապես, իսկ ունևորները պատսպարվել են պաշարման ժամանակ:[36] Հետագայում այս կարծիքը ժխտվել է:[37] Քարանձավային բնակարաններն իրենց ընդհանուր արժեքով ոչ մի բանով չեն զիջում սովորական տներին ոչ միայն նրա համար, որ քարանձավների մեջ կան մի քանի սենյակներով բավականին հարուստ բնակարաններ իրենց հարմարություններով, այլև դրանց կերտումն անհամեմատ մեծ ծախսերի հետ է կապված, հաճախ շատ ավելի, քան անհրաժեշտ էր քարաշատ սարահարթում տուն կառուցելու համար: «...բոլորովին աղքատ մարդիկ չէին անոնք, որովհետև որևէ մեծությամբ քարայր մը փորելու համար գրեթե նույն չափ ծախք և աշխատություն էր հարկավոր նույնչափով հասարակ բնակարան մը հողեն դուրս շինելու համար», - գրում է Թ. Թորամանյանը:[38]

Քարանձավների թվագրման համար պիտի նկատի ունենալ երկու հանգամանք. ոչ բոլոր քարանձավներն են համաժամանակյա, և տվյալ համալիրում ոչ բոլոր քարանձավային բնակարաններն են միաժամանակյա աշխատանքի արդյունք: Այն, որ քարանձավներն ավելի վաղ են բնակեցված եղել, վկայում է 1904թ. Ծաղկոցաձորի աջ ափի քարանձավային դամբարանից գտնված բրոնզիդարյան մատանին:[39] Հայկաձորի նորահայտ արվարձանի Ախուրյանի ափամերձ դարավանդից՝ քարանձավների հարթակների մակերեսից գտնվեց պալեոլիթյան մի հատիչ, սակայն այն կարող էր ցած սահած լինեն նաև վերին պլաստից:

Նորահայտ արվարձանի պեղումները թույլ են տալիս փաստել, որ Անիի քարանձավային համալիրները ստեղծվել են բավականին երկար ժամանակահատվածում և իրենց վերջնական ձևավորումը ստացել են Բագրատունիների ժամանակ՝ 9-10-րդ դարերում և ծաղկում են ապրել հատկապես այդ ժամանակաշրջանում: Հետագայում՝ 13-րդ դարում, *Քարանձավային Անին* լրացվել է եկեղեցական, բնակարանային, առևտրային համալիրներով և գերեզմանոցներով: Պեղումների նյութերը փաստում են նաև, որ քարանձավային բնակավայրը գոյատևեց Անիի քաղաքական անկումից հետո էլ, և կյանքն այստեղ շարունակվել է ընդհուպ մինչև 20-րդ դարը: Երերույքում ևս քարանձավները հավանաբար օգտագործվել են դեռևս նախնադարում, սակայն այստեղ ևս բնակեցման հնագույն հետքերը վերաբերում են վաղ քրիստոնեական շրջանին: Երերույքի քարանձավները բնակեցվել են առաջին քրիստոնյաներով՝ ծառայելով և՛ որպես աղոթատեղի, և՛ կացարան:[40] Թեև Կամխուտի քարանձավային բնակավայրի հնագիտական հետախուզությունը ցույց է տալիս, որ մինչև անցյալ դարի 20-ական թվականները քարանձավների բնակեցված լինելը խաթարել է նախնական վիճակի պատկերը, սակայն հավանաբար այստեղ VII դարի Ս. Աստվածածին եկեղեցու կառուցմանը նույնպես նախորդել է քարանձավների աղոթատեղի և միաժամանակ կացարան լինելը առաջին քրիստոնյաների համար:

Վերևում նշել ենք, որ Ախուրյանի կիրճի Բանդիվան-Արեգնադեմ-Մարմաշեն հատվածում կան մեկուսի, փոքր քարանձավներ: Հայտնի է, որ հատկապես միջնադարում այսօրինակ քարանձավները կացարան են ծառայել ճգնավորների համար: Հայաստանում քրիստոնեության մուտքի և քրիստոնյա սրբերի վարքաբանության մեջ որոշ հիշատակումներ կան նաև քարանձավներում նրանց բնակության մասին: Մովսես Խորենացին, բերելով Հռիփսիմյան կույսերի Հայաստան գալու պատմությունը, կույսերից մեկի՝ Մանեի մասին գրում է.- «Քանզի էր կին ոմն անուն Մանի, յընկերաց սրբոց

---

[36] *Д. Кипшидзе, նշվ. աշխ., էջ77:*
[37] *Նույնը:*
[38] *Թ. Թորամանյան, նշվ. աշխ., էջ 325-326:*
[39] *Д. Кипшидзе, նշվ. աշխ., էջ24:*
[40] *Ф. Тер-Мартиросов, նշվ. աշխ., էջ 236-237:*

Հռիփսիմեանց... բնակեցաւ ի լերինս յայսոսիկ. յայրս ինչ քարանց. վասն որոյ կոչեցաւ անուն լերինն Մանեայ այրք.»:[41] Այնուհետև ավելացնում է. «... յոր այրի յետոյ բնակեցաւ և սուրբն Գրիգոր»:[42] Գրիգոր Լուսավորիչն իր կյանքի վերջին երեսուն տարին անցկացնում է այս քարանձավում և «...կեցեալ աներևութաբար ամս բազումս՝ փոխի մահուամբ ի կարգս հրեշտակաց: Եվ հովուաց գտեալ զնա վախճանեալ՝ ի նմին տեղւոջ թաղեցին...»:[43] Թերևս բնական կարելի էր համարել Մանեի ապրելը քարանձավում, եթե նկատի ունենանք, որ նա բնականաբար տեղյակ էր նաև առաջին քրիստոնյաների նկատմամբ վերաբերմունքին: Իսկ Գրիգոր Լուսավորիչի պատմությունը մեզ բերում է այն համոզման, որ բոլորովին էլ պատահական չէր ոչ երեսուն տարի քարանձավում ապրելը, ոչ էլ նրա՝ հովիվների կողմից նույն տեղում թաղվելը: Ինչպես հայտնի է, Քրիստոսի ծնունդը ևս քարանձավում էր. Երուսաղեմի «Քրիստոսի ծնունդ» եկեղեցին փոքր քարանձավ է: Ի դեպ, Քրիստոսը ոչ միայն ծնվեց, այլ նաև թաղվեց քարանձավում «...դրաւ զայն նոր գերեզմանին մէջ, զոր փորած էր ժայռին մեջ իրեն համար, յետոյ մեծ վէմ մը գլորեց իբր կափարիչ գերեզմանին ....»:[44]

Միջնադարում հոգևորականների մեկուսանալու և հատկապես քարանձավներում ճգնելու փաստերը բազմաթիվ են: Անիում քարափոր դամբարաններ ևս կային: Թ. Թորամանյանի վկայությամբ Ծաղկոցաձորի մեջ Զաքարե սպասալարի զորավար Տիգրան Հոնենցի նկարազարդ մատուռի ավերակներով քարայր-դամբարանն է, ում անբավ հարստությունը կարելի էր չափել եկեղեցիներին նրա տված նվիրատվություններով. բացի ոսկյա և արծաթյա զարդերից և անշարժ գույքից, քանի՞ գյուղեր էր բաշխել այս կամ այն եկեղեցուն:[45] Իսկ ինչն էր ստիպում նրան տոհմական գերեզման ընտրել քարանձավը: Ըստ Թորամանյանի,-«...անկասկած քարայրերը ավելի հաստատուն և տևական նկատված էին, քան դուրսը շինված դամբարաններն ու բնակարանները և ավելի ապահով՝ բնության ավերիչ արկածներու դեմ»:[46] Թեև իրոք, քարանձավները զերծ էին խոնավությունից, և դիակը կարող էր երկար պահպանվել (լավագույն օրինակը պեղումների ժամանակ Հոնենցի դամբարանի մեջ գտնված աղջնակի մումիա դարձած աճյունն է), սակայն արդյոք հավատավոր քրիստոնյայի համար այն կարևոր էր: Սուրբ մասունքների վերարտադրությունը ենթադրում է ոչ միայն քարանձավում ապրել, այլ նաև՝ թաղվել: Այս համատեքստում պիտի տեսնել նաև Անի գետակի աջ ափի մի շարք ընդարձակ քարանձավների՝ հարուստ անեցիների վերջին հանգրվան լինելը, ինչպես Տիգրան Հոնենցի դամբարանն է:[47]

Ինչպես տեսանք վերը, հայոց պատմիչների մոտ քարանձավներում բնակության մասին հիշատակումները վերաբերում են միայն քրիստոնեական շրջանին, սակայն քարանձավները ծիսապաշտամունքային դեր ունեին դեռևս պալեոլիթում: Բնության ստեղծած բացվածքները, նախամարդու առաջին կացարան լինելով, նույն մարդու կողմից բարձրացվել են պաշտամունքի աստիճանի: Վաղ բրոնզի դարաշրջանում հավատալիքը փաստված է հնագիտական նյութերով: Անձավային կամ կատակոմբային դամբարաններ հայտնի են Փոքր Ասիայից, Միջերկրական ծովի ափամերձ երկրներից:[48] Հայաստանում նման թաղումներ հայտնի են վաղբրոնզիդարյան (Հառիճ) և ուշբրոնզիդարյան (Արթիկ, Ոսկեհասկ, Սպանդարյան) հուշարձաններից:[49]

Քարանձավը տարբեր ժողովուրդների դիցաբանություններում և առասպելաբանության մեջ տարատեսակ ըմբռնումների և հավատալիքների հետ է կապվում: Քանի որ քարանձավները հաճախ տեղայնացված են կա՛մ բարձր լեռների մեջ, կա՛մ խոր

---

[41] *Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Եր.,1981,Գիրք II, ՂԱ:*
[42] *Նույնը:*
[43] *Նույնը:*
[44] *Նոր կտակարան, Լիզպոն, 1994, Ավետարան ըստ Մատթեոսի, 60:*
[45] *Թ. Թորամանյան, նշվ. աշխ., էջ 326:*
[46] *Նույնը:*
[47] *Ա. Օրբելի, նշվ. աշխ., էջ123:*
[48] *Լ. Պետրոսյան, Раскопки Кети и Воскеаска Ер. 1989. стр. 71.*
[49] *Т. Хачатрян, Артикский некрополъ, Ер. 1979, стр. 11. Л. Петросян, Раскопки Кети и Воскеаска, Ер., 1989, стр 71.*

իջվածքներում ու կիրճերում, դիցաբանական ընկալումներում դիտվում են ուղղված երկնքին կամ անդրաշխարհին: Քարանձավը դիտվել է նաև ինչպես երկիր-մոր և երկինք-հոր միացման տեղ, այնպես էլ դեպի ստորին աշխարհ տանող մուտք: Հունական առասպելաբանության մեջ քարանձավը ծիսական ապաստարան և թաքստոց է,[50] տիեզերքի խորհրդանիշ և սրբավայր:[51] Քարանձավը բնական կացարան է խտոնիկ (անդրաշխարհային) էակների համար: Ի տարբերության տան՝ քարանձավը աչքի համար անտեսանելի է, մարդուն հեշտությամբ չի թողնում ներս և առավել դժվարությամբ է դուրս թողնում: Անդրաշխարհային կերպարներն իրենց զոհին հետևում են քարանձավից՝ ինչպես այն աշխարհից կամ մահվան թագավորությունից: Երբեմն այդ պատուհանը համապատասխանում է միաչքանի դիցաբանական կերպարի հետ, ինչպիսին Պոսեյդոնի որդի կիկլոպ Պոլիփեմոսն էր:[52] Անձավը տիեզերքի մայրն էր և որպես սրբավայր՝ նվիրված էր տիեզերքին: Քարանձավի մեջ կյանքի, մահվան և հարության գաղափարների համատեղմամբ են բացատրվում ոչ միայն պալեոլիթյան քարանձավների պատերի նկարազարդումները և քարանձավը որպես աղոթատեղի կամ սրբարան ծառայեցնելը, այլ նաև՝ միթրարիումների և վաղ քրիստոնեական տաճարների քարանձավի ձև ունենալը: Քարանձավ-տաճարն իրենից ներկայացնում էր տիեզերքի մոդելը, և քարանձավը տիեզերքի նմանություն ուներ, որ ստեղծել էր Միթրան, իսկ նրա ներսում եղած իրերը տիեզերական տարրերի խորհրդանիշներ էին:[53] Նույն խորհուրդն ունի նաև Ագռավաքարի քարանձավը, ուր ամեն տարի Համբարձման և Վարդավառի գիշերը երկինքն ու երկիրը համբուրվում են, բացվում են Վանա միջնաբերդից ոչ հեռու գտնվող Ագռավու քար քարանձավի դռները, և Մհերը դուրս է գալիս քարանձավից:[54]

Տիեզերքի և երկնքի խորհրդանիշ անձավային դամբարանները, ինչպես և թաղման կառույցի ցանկացած ձև նպատակամղված են մի նպատակի՝ հանգուցյալի վերածնունդին: Ինչպես տարբեր ժողովուրդների մշակույթներին բնորոշ անձավ-դամբարանները, այնպես էլ Տիգրան Հոնենցի դամբարանը, ընտանեկան էր, և քարանձավի մեջ թաղվելը գուցե ողջ տոհմի համատեղ վերածնության խորհուրդ ուներ: Աշխարհի և մարդկության վերածնության ու մաքրման խորհուրդն է կրում Քրիստոսի գերեզմանը: Պատահական չէ, որ սրբերի և ճգնավորների կյանքն ու մահը են կապված անձավ-դամբարանի հետ: Նրանք ապրում, մեռնում և թաղվում էին քարանձավում:

Հայաստանում բազմաթիվ են նաև վիմափոր եկեղեցիները և հայտնի են Անիից,[55] Մրենից, Սպիտակից,[56] Վանքասարից:[57] Ըստ ազգագրական աղբյուրների, Արևմտյան Հայաստանի «Խոզաթի շրջանի Տուժիկ գյուղից վերև՝ ժայռագագաթին էր գտնվում քառասուն սրբերին նվիրված քառասուն խորան ունեցող ս. Սարգիս վանք-եկեղեցին, որը քարափոր էր, և միայն գմբեթն էր ժայռերից դուրս... Խոզաթի շրջանի Քորնքա (Կորնգան) գյուղի արևելյան կողմի ժայռերի մեջ գտնվում էր մի քարափոր եկեղեցի ս.Նշան անունով»:[58] Արդյո՞ք պատահական է, որ քարանձավային համալիրների հարևանությամբ են կառուցված Երերույքի և Կամխուտի եկեղեցիները կամ Գեղարդի վանքային համալիրը, ուր քարանձավը ներառվել է կառույցի մեջ: Բոլոր դեպքերում էլ հավանաբար նպատակը եղել է նույնը՝ պահպանել քարանձավ-սուրբ կառույցը:

Այսպիսով, Ախուրյանի կիրճի քարանձավային բնակավայրերը և քարանձավ-կացարանները միավորվում են տեղանքի ընտրությամբ, համալիրների ձևով, վիմափոր կացարանների ճարտարապետական լուծումներով և կերտման աշխատաոճով: Բնա-

---

[50] *Мифы народов мира, том 2, М., 1992, стр. 311.*

[51] *Ս. Մխիթարյան, Թաղման ծեսի մի քանի դրվագ ըստ Գր. Մագիստրոսի, Հին Հայաստանի մշակույթ, 3, Եր., 2003, էջ 146:*

[52] *Ն. Կուն, Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները, Եր., 1956, էջ 529-530:*

[53] *Мифы народов мира, том 2, М., 1992, стр. 312.*

[54] *Ս. Ղանալանյան, Ավանդապատում, Եր., 1969, էջ 39-40:*

[55] *И. Орбели, Избранные труды, Ер., 1963, стр.123.*

[56] *А. Калантарян, Г. Саркисян, О работах Спитакской экспедиции АО 1978, М., 1979, стр. 522-523:*

[57] *Հ. Սիմոնյան, Հ. Մանասյան, Վանքասարի հուշարձանները, Հուշարձան տարեգիրք Գ, Եր., 2005, էջ 159:*

[58] *Գ. Հալաջյան, Դերսիմի հայերի ազգագրությունը, ՀԱԲ, հ. 5, 1973, էջ 40:*

կելի քարանձավների մի մասը, որ վիմափոր և բնական համալիրներ են, ծառայել են որպես մշտական բնակարան, իսկ վտանգի ժամանակ ապաստարան են դարձել նաև այստեղ չբնակվողների համար: Մեկուսի, փոքր, բնական քարանձավներում ապրել են ճգնավորները՝ պահպանելով հավատարմությունը Քրիստոսին և նրա սուրբ մասունքներին: Նույն գաղափարով են առաջնորդվել նաև քարանձավ-մատուռներ և վիմափոր եկեղեցիներ, ինչպես նաև քարանձավային բնակավայրերի վրա եկեղեցիներ կառուցելիս: Քրիստոնեական մասունքները վերարտադրելու և Քրիստոսին մերձենալու գաղափարն է առաջնորդել նաև քարանձավները որպես հանգստարան օգտագործելիս:

## ПЕЩЕРЫ И ПЕЩЕРНЫЕ ЖИЛЫЕ КОМПЛЕКСЫ КАНЬОНА РЕКИ АХУРЯН НА ОТРЕЗКЕ ДЖРАДЗОР-АНИ

*Резюме* — *Л. Еганян*

Пещерные комплексы прослеживаются почти по всей протяженности каньона реки Ахурян. Это в основном хорошо известные пещерные сооружения и замечательные пещерные ансамбли Ани и его новонайденного северного пригорода Айкадзора на территории Республики Армения, а также пещеры Мармашена, Ереруйка, Бениамина, Джрапи и Камхута.

Большая часть жилых пещер Ани и его пригорода Айкадзор, расположенных в каньоне, имеют большие размеры и представляют собой в основном две и более комнаты с нишами, хозяйственными ямами, тонирами, очагами и т.д. В жилых пещерах преобладает прямоугольная форма помещений с плоским потолком. По материалам раскопок установлено, что интенсивное развитие жизни связано с эпохой царства Багратидов: X-XIII вв..

В каньоне реки Ахурян, в базальтовых слоях есть и пещеры малых размеров, которые часто служили кельями. Наряду с кельями существовали пещеры-святилища. Так как Христос родился и погребен в пещере, и храм Рождества Христого в Иерусалиме-небольшая пещера, то пещеры-святилища и пещеры-кельи воспринимались и в качестве святых ясел.